ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի նիստի

2016 թվական, սեպտեմբերի 23,

Նախագահում էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (այսուհետ՝ Նախարար), Խորհրդի նախագահ Ա. Ասատրյանը (այսուհետ՝ Նախագահ)

Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ՝

Աննա Եղիազարյան	«Հայկական կարմիր խաչ ընկերություն» ՀԿ
Աիդա Մուրադյան	«Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» ԲԿ
Արթուր Սարգսյան	«Աշխատանքի իրավունքի պաշտպանի գրասենյակ» ՀԿ
Արսեն Աբրահամյան	«Հայաստանի համայնքների միություն» ԻԱՄ
Արսեն Ստեփանյան	«Սեյվ դը Չիլդրեն Ինթերնեշնլ» Հայաստանյան ներկայացուցչություն
Նաիրա Առաքելյան	«Արմավիրի զարգացման կենտրոն» ԲՀԿ
Թամարա Աբրահամյան	«Արազա» ԲՀԿ
Արմինե Մուքոյան	«Հայ օգնության միություն» ԲՀԿ
Լալա Տեր-Ղազարյան	«Panorama.am» էլեկտրոնային թերթի լրագրող
Արա Հայրապետյան	Իրավաբան, փորձագետ
Սյուզաննա Բադոյան	Լրագրող

38994-16

13 10 2016թ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից (այսուհետ՝ Նախարարություն)

Հրավիրված էին՝

Արայիկ Պետրոսյան	ՀՀ ԱՍՀ նախարարի առաջին տեղակալ
Արեգ Սավգուլյան	Նախարարի խորհրդական
Անուշ Դանիելյան	Նախարարի մամուլի քարտուղար
Անահիտ Գալստյան	Նախարարության կենսաթոշակային ապահովության վարչության պետ
Թադևոս Ավետիսյան	Նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության պետ
Արթուր Կեսոյան	Նախարարության հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ
Լուիզա Ղարիբյան	Նախարարության երեխաների հիմնահարցերի բաժնի գլխավոր մասնագետ
Արամ Պետրոսյան	Նախարարության իրավական ապահովման բաժնի պետ
Սիրանուշ Զաքարյան	Նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

Բացակայում էին՝
Խորհրդի անդամներ

Սուսաննա Թադևոսյան	«Հույսի կամուրջ» ՀԿ
Մարիետա Թեմուրյան	«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեա» ՀԿ
Էդուարդ Կիրակոսյան	«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» ՀԿ
Միրա Անտոնյան	«Երեխաների պաշտպանության ցանց» ԻԱՄ
Տիգրան Պետրոսյան	«Հայկական Կարիտաս» ԲՀԿ

Աննա Մնացականյան ՖԱ

Աշոտ Քոչարյան «Սոս մանկական գյուղեր» ԲՀԿ

Քրիստինա Գևորկյան «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ

Օրակարգի նախագծում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. **ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) ստեղծման նպատակներն ու խնդիրները:**

2. **Խորհրդի գործունեության երկամյա ծրագրի մշակման վերաբերյալ առաջարկություններ (խորհրդի անդամների կողմից) և ծրագրի մշակման աշխատանքային խմբի ստեղծում:**

3. **«Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտներին խորհրդատվություն տրամադրող կազմակերպությունների ընտրության նպատակով մրցույթի անցկացման կարգը հաստատելու մասին» Նախարարի հրամանի նախագծի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում խորհրդի անդամներին:**

4. **Այլ հարցեր:**

Նիստի օրակարգի նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին: Նիստի օրակարգը հաստատվեց միաձայն:

Մինչև օրակարգի հարցերին անդրադառնալը՝ Նախագահը ողջունեց հասարակական խորհրդի անդամներին անդրանիկ նիստի կապակցությամբ՝ նշելով, որ այս ձևաչափով աշխատանքն իսկապես արդյունավետ հարթակ կլինի մեր երկրի ու քաղաքացիների առջև սոցիալական ոլորտում ծառացած խնդիրներին լուծումներ տալու առումով, և վստահություն հայտնեց, որ պետական մարմին - հասարակական կազմակերպություններ (այսուհետ՝ ՀԿ) փոխշահավետ համագործակցությունն արդյունավետ ընթացք կունենա:

1. **ՀՀ ԱՍՀՆ նախարարին կից հասարակական խորհրդի ստեղծման նպատակներն ու խնդիրները:**

Անցնելով օրակարգի առաջին հարցին՝ նախագահն անդրադարձավ հասարակական խորհրդի ստեղծման նպատակներին ու խնդիրներին.

- աջակցել նախարարության առջև դրված խնդիրների ու գործառույթների առավել արդյունավետ իրականացմանը՝ ներկայացնելով դիտողություններ ու

առաջարկություններ Նախարարության կողմից վարվող ընդհանուր քաղաքականության առավել արդյունավետ իրականացման վերաբերյալ,

- ՀԿ-ների կամ այլ շահագրգիռ անձանց մասնակցությամբ քննարկել հասարակության տարբեր շերտերի կարծիքներն ու տեսակետները Նախարարության առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման վերաբերյալ,

- ներկայացնել առաջարկություններ և դիտողություններ Նախարարության կողմից շրջանառվող իրավական ակտերի, հայեցակարգերի, ռազմավարությունների, ծրագրերի, նախագծերի վերաբերյալ և աջակցել հանրային քննարկումներին,

- ներկայացնել առաջարկություններ և դիտողություններ Նախարարության կողմից ձեռնարկվող բարեփոխումների ընդհանուր քաղաքականության ուղղությունների, ինչպես նաև նախարարության կողմից իրականացվող աշխատանքների առաջնահերթությունների վերաբերյալ,

- ներկայացնել առաջարկություններ և դիտողություններ Նախարարության ընթացիկ գործունեության նախարարության առանձնացված ստորաբաժանումներ հանդիսացող գործակալությունների կողմից մատուցվող ծառայությունների որակի բարելավման վերաբերյալ:

Այնուհետև Նախագահը խոսեց արդեն իսկ ստեղծված մեկ այլ աշխատանքային հարթակի՝ ազգային մակարդակում սոցիալական համագործակցության խորհրդի և վերջինիս նպատակի մասին և հավելեց, որ երկու հարթակներն էլ իրար փոխլրացնելով ծառայելու են սոցիալական պաշտպանության ոլորտում առկա խնդիրների արդյունավետ լուծմանը: Միաժամանակ, նա կոչ արեց ներկաներին հնարավորինս բաց լինել և հայտնաբերված բոլոր խնդիրները քննարկման առարկա դարձնել նախարարության համապատասխան պատասխանատուների հետ:

Օրակարգի առաջին հարցի ներկայացումից հետո տեղի ունեցավ քննարկում, որի ընթացքում առավել հստակեցվեցին հասարակական խորհրդի գործունեության և առաքելության հիմնական նպատակներն ու գործառույթները, փոխադարձ պարտավորություններն ու քայլերը:

Անցնելով օրակարգի երկրորդ հարցին՝ նախագահն առաջարկեց խորհրդի գործունեությունն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով ձևավորել երկամյա աշխատանքային ծրագիր, որի համաձայն կիրականացվեն խորհրդի հետագա աշխատանքները:

2. **Խորհրդի գործունեության երկամյա ծրագրի մշակման վերաբերյալ առաջարկություններ (խորհրդի անդամների կողմից) և ծրագրի մշակման աշխատանքային խմբի ստեղծում:**

Երկրորդ հարցի վերաբերյալ Խորհրդի անդամների կողմից հնչեցին կարծիքներ և առաջարկությունները:

Արսեն Ստեփանյանը նշեց, որ Խորհրդի նիստերում պետք է քննարկել նաև ոչ պլանավորված հարցեր: Յուրաքանչյուր հանդիպման համար կարելի է ընտրել մեկ թեմա, որի շուրջ յուրաքանչյուր կազմակերպություն կներկայացնի իր կատարած աշխատանքն (պրեզենտացիայի տեսքով) ու կառաջարկի լուծման տարբերակները:

Սյուզաննա Բաղդասարյանը նշեց, որ անհրաժեշտ է ձևավորել փոքրիկ աշխատանքային խմբեր, որտեղ նախապես կքննարկվի որևէ հայտնաբերված խնդիր, այնուհետև կներկայացվի Նախարարին կամ Խորհրդին: Անդամները պետք է պարբերաբար հանդիպումներ ունենան, որպեսզի պատկերացում կազմեն իրենց ռեսուրսների և կարողությունների և դրանց փոխգործակցության շրջանակի մասին:

Նաիրա Առաքելյանն առաջարկեց օրակարգում ներառված հարցերից ելնելով՝ Խորհրդի նիստերի աշխատանքներին հրավիրել նաև այլ գերատեսչությունների՝ մասնավորապես ՀՀ տարածքային կառավարման նախարարության ներկայացուցիչների, ինչը հնարավորություն կընձեռի առավել արդյունավետ կազմակերպել համագործակցությունը տարածքային մակարդակում:

Աննա Եղիազարյանը՝ սոցիալական պաշտպանության ոլորտում Նախարարության կողմից վարվող քաղաքականության առավել արդյունավետ իրականացման նպատակով առաջարկեց, որ Նախարարությունն իր կողմից մշակվող ռազմավարական փաստաթղթերը ներկայացնի Խորհրդի քննարկմանը՝ նախքան ՀՀ կառավարություն ներկայացնելը: Նա առաջարկեց հնարավորության դեպքում ապահովել ինչպես Խորհրդի անդամների, այնպես էլ ազգային մակարդակում սոցիալական համագործակցության համաձայնագրին միացած կազմակերպությունների մասնակցությունը սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի մոնիթորինգի և գնահատման աշխատանքներին, ինչը հնարավորություն կտա ՔՀԿ սեկտորին ներկայացնել իր առաջարկությունները:

Նիստին ներկայացվեց նաև Աննա Մնացականյանի (բացակա) կողմից գրավոր կերպով ներկայացված առաջարկը, ըստ որի խորհրդի կազմում կարելի է ձևավորել ենթախմբեր ըստ ասպարեզների՝ երեխայի պաշտպանության դաշտ, կանանց հիմնահարցեր, հաշմանդամություն ունեցող անձինք, ժողովրդագրություն և այլն: Յուրաքանչյուր ենթախումբ որոշակի ժամանակահատվածում կարող է իրականացնել փաստաթղթային գույքագրում՝ հայեցակարգերի, ռազմավարությունների, ծրագրերի: Համադրելով առկա իրավական ակտերը («Հայեցակարգերի, ռազմավարությունների, ծրագրերի կազմման մեթոդական ուղեցույց, Հավելված ՀՀ կառավարության 2015 թ. հունվարի 22-ի նիստի N 2 արձանագրային որոշում), կարելի է հանդես գալ առարկայական առաջարկներով Խորհրդի գործունեության երկամյա ծրագրի վերաբերյալ:

Թամարա Աբրահամյանն առաջարկեց, որ խորհրդի անդամներին հնարավորություն տրվի մասնակցելու նախարարության մոնիթորինգի և վերլուծության վարչության այն աշխատանքներին, որոնք ուղղված են նախարարության ենթակայությամբ գործող

ստորաբաժանումների կողմից մատուցվող սոցիալական ծառայությունների մոնիթորինգի և գնահատման ծրագրերի կամ մեթոդական ուղեցույցների մշակմանը:

Ներկայացված առաջարկությունների շուրջ ծավալվեց քննարկում: Ըստ այդմ Նախագահը, ելնելով քննարկման արդյունքներից, առաջարկեց, որ Նախարարությունը բարձրացված առաջարկությունների համատեքստում կմշակի Խորհրդի երկամյա գործունեության ծրագիր-նախագիծ, որը կներկայացվի Խորհրդի հավանությանը:

Նախագահի առաջարկությունն ընդունվեց միաձայն:

3. **«Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտներին խորհրդատվություն տրամադրող կազմակերպությունների ընտրության նպատակով մրցույթի անցկացման կարգը հաստատելու մասին» հրամանի նախագծի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում խորհրդի անդամներին:**

Անցնելով օրակարգի երրորդ հարցին՝ Նախագահը ներկայացրեց «Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտներին խորհրդատվություն տրամադրող կազմակերպությունների ընտրության նպատակով մրցույթի անցկացման կարգը հաստատելու մասին» հրամանի նախագիծը: Նա կարևորեց սոցիալական ոլորտում պատվիրակված ծառայություններ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթային ձևաչափի հաստատումն ու անցկացումը: Ըստ Նախագահի՝ սա պիլոտային ծրագիր է, որի արդյունքում Նախարարությունը ցանկանում է ՀԿ-ների կողմից սոցիալական ծառայությունների մատուցման դաշտում սահմանել իրավահավասար պայմաններ բոլոր կողմերի համար:

Ըստ այդմ Նախագահի կողմից կարևորվեց մրցույթի անկացման կարգի հստակ ձևակերպումը, որակական և քանակական չափորոշիչների մշակումը, մատուցվող ծառայությունների նկարագրի չափելի ու գնահատելի լինելը, ինչպես նաև իրականացվելիք ծրագրերի մոնիթորինգի և գնահատման չափանիշների հստակ սահմանումը: Նախագահը նշեց նաև, որ մրցույթի կազմակերպման և անցկացման գործընթացում ներգրավվելու են ազգային մակարդակում սոցիալական համագործակցության աջակցող ցանցն՝ ի դեմս համակարգող խորհրդի:

Երրորդ հարցի վերաբերյալ Խորհրդի անդամների կողմից հնչեցին կարծիքներն ու առաջարկություններ:

Աննա Եղիազարյանը նշեց, որ շահերի բախումից խուսափելու նպատակով միևնույն կազմակերպությունը չի կարող լինել և հայտ ներկայացնող, և գնահատող:

Աիդա Մուրադյանը նշեց, որ անհրաժեշտ է ընդլայնել համայնքահեն ծառայությունների պատվիրակման գործընթացի վերաբերյալ իրազեկման աշխատանքները, որպեսզի մրցույթին մասնակից դառնան մեծ թվով կազմակերպություններ:

Թամարա Աբրահամյանն ասաց, որ կա անհրաժեշտություն միասնական հարթակում ներկայացնել պետական բյուջեից ծախսված գումարների վերաբերյալ հաշվետվությունները, ինչպես նաև մոնիթորինգի ուսումնասիրությունները:

Արսեն Ստեփանյանն ասաց, որ անհրաժեշտ է ունենալ ծրագրերի ազդեցության գնահատման համակարգ՝ օգտագործելով տարբեր գործիքներ ու մեխանիզմներ: Ինչպես նաև կա անհրաժեշտություն համակարգելու լրատվամիջոցների և տարբեր կազմակերպությունների հետ աշխատանքը և ստեղծել որևէ կանոնակարգ հաստատություններ այցելելու, նկարահանելու, հարցազրույցներ վարելու և այլ իրավիճակների սահմանափակումների համար:

Արսեն Աբրահամյանը խոսեց Սոցիալական ծրագրերի իրականացումն համայնքի հետ համատեղ համակարգելու անհրաժեշտության մասին:

Նիստին ներկայացվեց նաև Տիգրան Պետրոսյանի (բացակա) առաջարկությունը: Մասնավորապես՝ նախագծի 11-րդ կետի վերջում ավելացնել՝ «բայց ոչ ուշ քան մրցույթի ավարտից 3 աշխատանքային օր առաջ» արտահայտությունը: Մշակել և սույն փաթեթին կցել մեկ հավելված, որում աղյուսակային կառուցվածքով կֆիքսվի ոլորտային փորձառությունը ներկայացնելու բնութագրերը և բոլոր դիմող կառույցները հնարավորություն կունենան նույն ձևաչափով ներկայացնել իրենց փորձառությունը: Այդ նպատակով նախագծի 13-րդ կետի 2 ենթակետի վերջում ավելացնել «համաձայն կից հավելվածում բերված ձևաչափի»:

Հնչեցված բոլոր առաջարկություններն ընդունվեցին միաձայն: Որոշվեց դրանք փոխանցել Նախարարության իրավական ապահովման բաժին:

4. Այլ հարցեր:

Օրակարգի 4-րդ կետի վերաբերյալ նախագահը խոսք տրամադրեց ելույթների համար:

Արսեն Աբրահամյանը նշեց, որ իրենց համայնքում (Արթիկ) կան կրկնակի թոշակ ստացած ընտանիքներ, որոնք գտնվում են սոցիալապես ծանր վիճակում և ի վիճակի չեն պետությանը հետ վերադարձնել արդեն ծախսած միջոցները:

Նախագահը նշեց, որ ծանոթ է խնդրին և վերջին տարիներին բազաների մաքրման աշխատանքի արդյունքում անճշտությունները գրեթե չեն մնացել: Նա նշեց նաև, որ Նախարարությունը նախաձեռնել է «ՀՀ պետական կենսաթոշակների մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագիծ», որն ուղարկվել է ՀՀ

կառավարություն, որի համաձայն սահմանվում է վաղեմության ժամկետ ավել վճարված գումարների համար, և ավել վճարված գումար բացահայտելու դեպքում հետ է գանձվում հայտնաբերման օրվան նախորդող երեք տարվա վճարված գումարները, ինչպես նաև առանձին կատեգորիաների անձանց համար հաշվի չեն առնվի 01.01.2016 թվականի դրությամբ ավել վճարված գումարները: Այս մեխանիզմը թույլ կտա, որ սոցիալապես ծանր վիճակում ապրող անձանցից գումարներ հետ չգանձվեն:

Ն. Առաքելյանը նշեց, որ «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ն իրականացրել է ուսումնասիրություն, որը վերաբերում է ՀՀ պետական բյուջեից ՀԿ-ներին ծրագրերի պատվիրակմանը: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ընդամենը 2 կազմակերպություն է պետական բյուջեից ստացած գումարների վերաբերյալ ներկայացրել հաշվետվություն: «Բաց կառավարման գործընկերության»-Հայաստան երրորդ ծրագրի շրջանակներում նա առաջարկել է ապակենտրոնացնել, թափանցիկ դարձնել և ընդլայնել ՈԿԿ-երի կողմից պետական բյուջեից սուբսիդիաներ, նվիրատվություններ տրամադրելու ընթացակարգը, ինպես նաև հրապարակել պետական ֆինանսավորում ստացած ՈԿԿ-երի գործունեության տարեկան հաշվետվությունները՝ այդ թվում ֆինանսականը: Ըստ Ն. Առաքելյանի Խորհուրդը պետք է ուշադրություն դարձնի նաև սոցիալական պաշտպանության բյուջեով ֆինանսավորվող և ՀԿ-ների կողմից իրականացվող ծրագրերի թափանցիկությանը և հաշվետվողականությանը:

Նիստի ավարտին որոշում կայացվեց ամփոփել հնչեցված բոլոր առաջարկությունները, օրակարգում ընգրկված հարցերը լրամշակել առաջարկությունների հիման վրա և ներկայացնել խորհրդի քննարկմանը:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա. ԱՍԱՏՐՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԵՑ՝ **Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ**